



ՏՆՕՐԷՆ ԽՄՐԱԴԻՐ

ԵՒ

ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒ

ՆԻԿ. Մ. ԹԻՒՂԱՆՏՅԱՆ

ԽՄՐԱԴՐԱՏՈՒՆ

Ղալաթիա Բերլինգի Բաղար Իրի Խանի գեղը Սամսուր փո 279 թիւ 12

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ԹԵՐԹԸ 3 ՂԱՆԻ ԹՈՒՂԹԻՆ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռոկոկո

Կ. Պօլսոյ համար

Տարեկան	դր. 100
Վեցամսեայ	» 50
Եռամսեայ	» 25

Գաւառաց համար

Տարեկան	դր. 150
Վեցամսեայ	» 75
Եռամսեայ	» 40

Օտար երկիր տրին. 40 ձր.ք.

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Բաւական չէր կարծես զբաւական տագնապն ու խառնաշփոթութիւնը, տտեհէ՛մ'ի վեր տեղոյս հրապարակին վրայ հասած գործառնութեանց գաղաբումն ու առեւտրական տագնապն ալ հետզհետէ ծանրանալ կոկոսի:

Ուրիշ երկիրներու մէջ երբ այս տեսակ առեւտրական տագնապն վրայ կ'հասնին, թէ այդ երկիրներու վաճառականը և գործարանատէրք որոն տագնապն մինչև ժամանակ մը զիմանալու չտի հարուստ և զօրաւոր են, և թէ կառավարութիւնը անմիջապէս իր գանձը կ'ընեն՝ տագնապն երեսէն հասարակութեան կրած աղէտքն ու գեղատրութիւնը ամօքելու և թեթեւեղելու:

Մինչդեռ հաս ամեն բան իրար դեմ են: Ժողովուրդն ու հասարակութիւնը արգէն աղքատ և տկար, կառավարութեան Գանձը ամենէն աւելի տկար և օգնութեան կարօտ, երբ այս փրճակին մէջ դրամական ու առեւտրական տագնապ վրայ հասնի, ալ երեւակայելու թէ ո՞վ պիտի կարենայ դիմանալ, և ո՞վ որու օգնութեան կարող է հասնիլ:

Թղթագրութիւն այս ատուհան անկեանն ու պատճառաւ խառնաշփոթութեանը դարձեալ մինչև մէկ աստիճան մը կարելի էր տակալել թէ գործառնութեանց գաղաբումն ու առեւտրական տագնապն ալ այնքան շատ վրայ չհասնէր, որ բոլորովին ջրասած և ուժաթափ ըրած է տեղոյս հասարակութիւնը, որն որ Պէրլինի գաղնագրին կիցուելէն քիչ ատեն ետքը՝ բացուած առուտուրով ու գործառնութեամբ փոքր ինչ սղեղի սկսած էր:

է բնի թէ՛ եղած

սպառումն ոչ այնքան ներքին էր, որչափ շատ աւելի Բուժելի ալիւալ գաւառաց համար, որոնք երկամեայ պատերազմի մը երեսէն ունեցած վաճառքի ծարաւին ու անօթութիւնին, ըստ կարելոյն յադեցնելու համար, խաղաղութիւնը հաստատուելուն և մայրաքաղաքիս հետ հաղորդակցութեան ճանրոյններն վերջապէս բացուելուն պէս, սկսած էին անյադարար վաճառք քաշել մայրաքաղաքէս. զի պատերազմի աղետից երեսէն կըրած նիւթական կորուստնուն տեղը լեցուած էր ուսական բանակին սիւսած Բօլեղովն ու Քարպօններովը, որով Բուժելի բնակիչը դրամ ի ձեռին Պօլիսէն անոսհաման վաճառք կուզէին ու կսպառէին:

Իսկ այս շարժումը հաղիւքանի մ'ամիս տեւեց և անմիջապէս դադարեցաւ, զի մարդիկըն իրենց անմիջական պէտքն հագալով կեցան այլևս:

Ասի արտաքին կարգի առեւտրական շարժում մ'էր, զի 2 ասարուան պակաս մնացած պէտքը միահագոյն հագալու և առնելու կ'իտեայր ամեն ոք, երբ անգամ մը լեցու այս պէտքը՝ այլևս մայրաքաղաքիս գործառնութեանց շարժումն ալ կեցաւ, զի Բուժելի ժողովրդաց սպորական պիտոյիցը հարկ եղած վաճառացն համար հետըզհետէ Յիլիպէի, Վարնայի, Սօֆիայի, Բուժուզի, Շուժնույի, Թրնօվոյի և ուրիշ գլխաւոր քաղաքաց մէջ մեծաւոր մեծ նոր վաճառատուններ կը բացուէին, որոնք իրենց պէտք ունեցած եւրոպական վաճառքներն ուղղակի Եւրոպայէն բերել տալ սկսած էին, մայրաքաղաքիս վաճառացը այլևս պէտք մը չունենալով:

Հետեւաբար տեղոյս վաճառականը ալ, որ առջի բերան տեսնուած առեւտրական տաք

շարժումէն խաբուելով, իւրաքանչիւրն իր կարողութեանը և դրամագլխուն ներածին կրկին կամ եռապատկը վաճառք ապրսպըրեր էր Եւրոպա, մէկ կողմէն առուտուրներուն դադարիլը, միւս կողմէն ալ պէտքէն շատ աւելի վաճառքներն հետըզհետէ հասնելով, ատոնց պիտի և պարտուց բեռանը տակ ճնշուած գտաւ ինքզինքը:

Ասոր ետեւէն վրայ հասաւ դրամական տագնապն ու խառնակութիւնը՝ որ բոլորովին չիթեցոյց զիրենք, որք այսօր անգործ և ապշած կ'կենան՝ իրաց ինչպիսի ելք մ'ունենալը տեսնելու:

Հարկ չկայ ըսելու թէ մայրաքաղաքս, որն որ Թուրքիոյ վաճառականական սպառմանց ընդունարաններուն կեդրոնական աւազանը կամ աղբիւրն է, բնաւ Ասիական Տաճկաստանի համար վաճառաց սպառում մը հաշուի չընէր, զի Անատոլու գրեթէ ոչինչ է վաճառականութեան համար, Անատոլույի մէջ ամեն գաւառ գրեթէ իրմէն երած նիւթերն սպառելու վիճակին մէջն է, զի Պօլսէն հարկ եղած վաճառքը բերել տալու համար ոչ հարստութիւն ունի և ոչ ճանապարհ, հետեւաբար Անատոլուն մեղի համար չէ կը մնար մինակ Բուժելին, այս ալ առեւտրական կեդրոնները անգամ մը իւր գլխաւոր քաղաքաց մէջ հաստատուելուն պէս, այլ ևս Կ. Պօլսը՝ վաճառաչտհ և վաճառականութեան կեդրոն քաղաք մ'ըլլալէ դադարելով, մինակ կայսերաց, եպարգոսներու, նախարարաց, գեապանաց, զրաւատեարց, սեղանաւորաց, և օտար ուղեւորաց բնակութեանը յաւկայեայ մայրաքաղաք մ'ըլլալու սահմանուած կերբի, ուր կամաց կամաց գործ մը պիտի չկարենան ունենալ ար:

ուետաւորք (խնաֆ) և ատոնցմէ վատտիող սա կամ նա կարգի անձինքը:

Պօլսոյ և Անատոլույի վաճառաչտհութիւնն այսպէս, իսկ վաճառահանութիւնն ալ գրեթէ ասկէ շատ վար չմնար խեղճութեան կողմանէ:

Թուրքիոյ ասիական մասէն դուրս ելած նախնական (խաւ՝) վաճառքը՝ նախորդ տարիներն դուրս ելած քանակութեանը գրեթէ կիսուն հազու կ'հասնի, գրեթէ նախորդ տարիներուն ալ կէս առ կէս գնովը, բուրդը, բամբակը, փիւնը, ճէհըն և այլ ուրիշ տեղական բերքերն, որք ասկէ Եւրոպա կը զրկուէին, զի հան ալ առեւտրական ընդհ. տագնապն պատճառաւ, թէ՛ գործարանաց շաւղ գոցած ու աշխատութիւններն գաղաբեցուցած են, և թէ բաց գործարաններն ալ իրենց սովորաբար ընդունած նախնական նիւթոց հազու կ'իտուն չափ բան տարազագործելու վրայ կը գտնուին:

Այս ընթացքին վախճանը այնքան փայլուն և յաջող վախճան մը չէր իր, որոյ իւր դարման մէկուն ալ ձեռքէն սեւէ բան մը չգալը յայտնի ըլլալով, կ'մտադրեմք միայն որ այս վիճակին անհրաժեշտ և անխուսափելի հետեւանքն եղած շարաչուք անանկութիւններն վրայ չ'հասած, կայս. կառավարութիւնը փութաց ժամ յառաջ Ասիոյ մէջ հարկ եղած բարենորոգումներն գործադրելու, որպէսզի բարեկեցութիւնը, ապահովութիւնն ու անդորրութիւնը վերահաստատուելով, գոնէ բնակիչը ժամ յառաջ կարենան իրենց օրական ապրուստը հայթայթելու չափ աշխատութեան մը տալ ինքզինքնին, և Կ. Պօլսոյ վաճառականութեանը համար ալ այսօր կ'ըսուած Բուժելի գաւառաց աւել թէ՛ Ասիական



դաւառներն կարենան օր յառաջ սպառման ընդունարաններ և գործառնութեանց ասպարէզ մ'ընծայելու:

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

ՓՈՒՍԱՆՈՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Մատթէոս եպիսկոպոս իզմիրլեան ընդհ. ժողովէն պատրարքական փոխանորդ կ'ընտրուի, գրեթէ պատրարքական կատարեալ իշխանութեամբ ու ձեռնհասութեամբ, բայց նա առանց հրաւիրագիր նամակի մը իսկ սպասելու, իր հրատարագելը ընդհ. ժողովոյ գիւանին կ'ըրկէ:

Աս ալ զարմանալի պարագայ մն է:

Իզմիրլեան սրբազանին ընտրութենէն առաջ Սերովբեան կարապետ սրբազանին և ուրիշ մէկ քանի Սրբազաններուն կանխաւ հաւանութիւնն առնելու համար սա կամ նա երեսփոխանին ձեռքը գիտաւորութիւննին ու կարծիքնին նախապէս իմանալու դիմումներն՝ յայտնապէս կ'ապացուցանեն թէ, նրամանորինակ դիմում մը իզմիրլեանին ալ եղած և կանխաւ ընդունելութեան հաւանութիւնն ալ առնուած ըլլալու էր զինքը «աստ» ընող խմբակին կողմանէ, և կամ յիշեալ խմբակը կանխաւ վստահ և ապահով եղած ըլլալու էր թէ իր ընտրելին եղած ընտրութիւնը չպիտի մերժէ:

Արդ ինչ կ'ընչանակէ նախ հաճութիւն տալ, և ընտրութենէն յետոյ հրատարակ, և զինքն ընտրող խմբակին այս ատիճան շփոթման ու շուարման մէջ ձգել: Ասի ալ խել մը այլ և այլ մեկնութիւն վերցնող պարագայ մն է:

Ստուգիլ իզմիրլեան սրբազան իր հրատարագին մէջ՝ իւր անձնական տկարութենէն դատուրիչ պատճառ չըլլալու, որ եթէ անկեղծ և ճշմարիտ պատճառ մ'եղած լինէր, ընդհ. ժողովը՝ որ բժշկութիւն չգիտնալով՝ հիւանդին ճառագողութիւն տալը իր կարողութիւնէն և պաշտօնէն վեր պիտի նկատէր, չուներ ուրիշ ընելիք մը՝ բայց եթէ անյայտ պարզ հրատարական ընդունիր իսկ զինքն ընտրող խմբակին անդամներէն օմանք՝ իւր այդ պարզ հրատարականք՝ պատճառաբանեալ հրատարականի մը կերպարանքին տակ նկատել ուզելով, որով միայն կրցան դորա քուէարկութեան ենթարկուիլը ետ ձգել տալ, իրաւունք ստուած կ'ըլլան նաև այլոց ալ այնպէս համարելու՝ թէ իզմիրլեան սրբազան հիւանդութենէ զատ ուրիշ

պատճառներ ալ ունէր հրատարելու:

Այս պատճառներն, ինչ որ ալ լինին, քանի որ իզմիրլեան սրբազան հարկ և խոհեմութիւն չէ սեպել իւր հրատարագին մէջ յիշատակել, ուստի իւր կուսակիցներն ալ անհարկ անխոհեմութիւն և անխորհրդապահութիւն մը գործած կ'ըլլային, նորընտիր փոխանորդին պահած հրատարական պատճառներն իրենք երևան հանել ուզելովն:

Բայց ինչ կրնային ըլլալ այդ պատճառներն, ասոնք ալ քննենք անգամ մը

Երբեք Բերբոլ

Թէրճէմանը Հագըգաթ տճկ. թերթը, Ատանայէն իւր ստացած տեղեկութիւններէն քաղելով, կ'հաւատէ թէ՝ Ուրիշ կողմերը ատենէ մ'ի վեր է Հայոց գտնուած յուզման և վերդովեալ վիճակին պատճառները միբարձրով քննուելով, ստուգուելու և իմացուելու է թէ, ասոնք բնաւ օտար թերադրութենէ մը չ'ընդհանրուելով ու չ'ըրգուելով, մինակ մէկ քանի ստորակարգեալ պաշտօնավարաց անիրաւ ընթացքին ու զեղծումներուն չկարենալով տոկալ, մէկ մ'ալ իրենց կեցութեան բարւոքմանը մասին բնաւ ոնէ իրական դարման ու միջոցներ ձեռք չ'առնուելէն յուսարեկ և համբերութիւններն հատած, այսպիսի ծայրայեղութեան մը դիմեր են: Տեղական իշխանութիւնք ալ չկարենալով լաւ մը գնահատել իրաց վիճակը, խել մ'անձինք բռնելով բանտարկելու վրայ, որքա՞ն ևս առաւել բարբոքել է:

Ուստի Ուրիշ Հայոց ապահովութիւն տրուելուն վրայ թէ՛ ըստ Պէրլինի դաշնագրին՝ կայս. կառավարութիւնն ալ այդ կողմանց՝ վիճակը բարւոքել որոշած է վերջնական կերպիւ, եւ թէ հարկ եղած բարենորոգումներն ալ հաստատուելու և գործադրելու համար մայրաքաղաքէս ալ բարձրատիճան պաշտօնավարներ կ'ապարտասուին դէպ այն կողմերն ուղևորուելու տեղւոյն բնակչաց հասարակաց կարծիքը հանդարտելու է, եւ այժմ հոն ապստամբութեան կերպարանք ունեցող սէէ բան մը չէ մնացեր:

\* — Վերոյիշեալ տճկ. թերթին տուած սոյն տեղեկութիւնները կապացուցանեն թէ, Ուրիշ Հայք բնաւ կայս. կառավարութեան դէմ ապստամբութեան դրոշ պարզած չ'ըլլալով, ինչպէս կ'կարծուէր իսկզբան, մինակ ասոնց ծայրայեղութեան դիմելը՝ պատճառ եղեր է որ

կառավարութիւնն ալ այդ կողմերուն բարենորոգմանց գործադրութիւնը փութացնելու ստիպուի:

Գոհութեամբ կ'ըսեմք թէ Պարսից Վեհ. Շահը, Արտաքին գործոց նախկին Խորհրդական Տատեան վսեմ. Յարութիւն պէյ. յի՛ Առիւծոյ և Արեգակոն Չրդ. կարգի պատուանշանը շնորհեր է:

Նմանապէս Վեհ. Սուլթանըն ալ Մագսուտեան Սիմոն պէյի, որ արդէն Յրդ. կարգի Մէծիտիէ պատուանշանն ունէր, այս անգամ Չրդ. կարգի Մէծիտիէի պատուանշանը շնորհեր է:

Պաշտօնէից ժողովը չք. օրուան արտաքոյ կարգի նիստին մէջ, Հայ-կաթողիկոց խնդրովն զբաղելու է և երկու մասին գլխաւորներէն ալ՝ ժողովոյ սրահին մէջ ընդունելով, հարկ եղած բացատրութիւններն առելու է:

Նախ Հասունեանց կողմէն ժողովոյ սրահն ընդունուողներն են՝ Ազարեան, Ներշապուհ և Մելքիսեդեկեան գերապայծառներն, Թնկրեան Եսայէր բաշա և Բիւզանդ. էֆ. Գուլում. ճեան Պետրոս էֆ. Ալլահվերալի Յովհ. էֆ. Ազարեան Արիստակէս էֆ, Մարեան Օննիկ պէյ, Թնկրեան Կարապետ էֆ. Հասուն Պողոս էֆ. Արնաւորեան Սերովբէ էֆ. և Վարդանեան ակնավաճառ Յովսէփ էֆ:

Ասոնք պաշտօնէից ժողովոյ առջիւ կ'այտարարեն թէ, Ս. Պապին կաթողիկ ճանչցած ժողովուրդը միայն կաթողիկ կըրնայ համարուիլ, իսկ որովհետեւ Հակահասունեանք Պապին կողմանէ կաթողիկ չեն ճանչցուած, ուստի կ'ընդգրկեն որ կիլիկիոյ կաթողիկոսութիւնը և Հայ-կաթողիկոց պատրարքութիւնը Հասուն գերապայծառն տըրուի:

Կէս ժամու չափ ասոնք ժողովին մէջ մնալէն ետքը, դուրս կ'ելնեն, և իրենցմէ՛սանմիջապէս ետքը ներս կ'հրաւիրուին Հակահասունեանց կողմէն ներկայացող Հ. Գրիգոր Վ. Լնֆիէ. ճեան, Հ. Պողոս Վ. Պոյնուէյ. ըրեան, Ահարոն վարդապետ, և քանի մ'ալ աշխարհականք, որոց մէջ չէին գտնուել ո՛չ կէս. չէան Յակոբ էֆ. ո՛չ Տիւղեան Միհրան պէյ և ո՛չ Փորթուքալեան Միքայէլ էֆ:

Ասոնք ալ առարկելով թէ Գուլում 8 տարիէ ի վեր զիրենք հայ կաթողիկ կ'ըմանէ և իբր այն՝ պատրարք մ'ալ տուած էր իրենց, որոյ այժմ հրատարակելը, բնականաբար տեղը ուրիշ Պատրիարքի մ'ընտրութիւն

նը հրամայուիլը կ'անգրեն, իրենց կերպարանքը ինչ որ էր՝ առկէ տառաջ՝ ֆիւրէլիանին հրատարակմանը բնաւ փոխուած չ'ըլլալով:

Պաշտօնէից ժողովոյ կողմէն Եպարքոսը գիտել կ'տայ թէ՛ հայ-կաթողիկոց պատրարքութեան Պէրաթը, ֆիւրէլեանին հրատարակմանը, Հասուն գերապայծառն տալ որոշած ըլլալով՝ կառավարութիւնը, իրենք ալ պարտաւոր էին միանալ միւս մասին հետ, իսկ եթէ չեն ուզեր միանալ, ապա ուրեմն «հայ կաթողիկ» անունէն զատ ուրիշ յորջորջում մ'ընտրելու են իրենց հասարակութեանը համար, որպէսզի զատ Պատրիարքի մը ընտրութեան արտօնութիւնը կարենան ստանալ, իսկ հայ կաթողիկ անուամբ՝ իրենց համար զատ պատրարք մ'ընտրելու հնարը բնաւ չկայ:

Հակահասունեանց պատգամաւորութիւնը դարձեալ իւր առջի խնդրանցը վրայ պընդելով դուրս կ'ելնէ ժողովոյ սրահէն:

Պաշտօնէից ժողովը երկու կողմանց ալ բացատրութիւնները լսելէն յետոյ, կիմացնէ երկու կողմանց ալ թէ՛ հարկ և արժան եղածը խորհելով, իր որոշումն ալ պաշտօնապէս պիտի ծանուցանէ երկու կողմանց ալ:

Յետոյ ժողովն ինքնիրեն մընալով կորոշէ, հայ կաթողիկոց պատրարքութիւնը Հասուն գերապայծառն վրայ հաստատելու, Ուստի կիլիկի երեկոյ Արտ. գործ. պաշտօնեայ Գարաթօտորի բաշայի կողմէն թէ՛ զքերէ մը կ'ըրկուի Հասուն գերապայծառն, որով կ'ըմանուցանէր թէ՛ Պատրիարքութեան Պէրաթը պատրաստուելով, Սուլթանին վաւերացման յղուելու ենթարկուելու է: Այս բանին համար ալ Եպարքոսին թարգմանը և Արտաքին գործոց պաշտօնէութեան կողմէն ալ պաշտօնավար մը շնորհաւորութեան գացել են Հասուն գերապայծառն:

Նմանապէս դադդ. դեոպան Պ. Յուրնիէ և աւսար. դեոպան Չիլի կ'ուսը, շնորհաւորութեան համար յատկապէս Հասուն գերապայծառն տուելու գացել են:

\* — Հասուն վերջապէս Պատրիարք եղաւ, ո՛վ պիտի հոգայ և խորհի Ասիոյ Հայոց վիճակը, գուշակութիւն ընել չենք ուզեր, բայց պատրարքն ու փոխանորդի ընտրութեամբ խաղող մեր երեսի, ժողովը թող ակննջը պատրաստ բռնէ այսուհետեւ Հայաստանէն եկած լուրերը լսելու:



Կէտիկ բաշտի օսմ. թատրոնը յառաջիկայ շք. գիշեր, ի նպաստն պատմատոյց Ընկերութեան Սամոթրիոյ, Թ.Ա.Փ.Ա.Ա. ԿԱՆ ՀՐԷի շքեղ ներկայացումը պիտի արուի Տարակոյս չկայ որ թէ՛ խաղին ազնուութիւնը եւ թէ՛ նպաստաւորեալ Ընկերութեան վարկած համակրութիւնը՝ լիովին եւ արժանաւոր կերպիւ պիտի փոխարինուի, թատերասէր ազգայնոց ներկայութեամբը:

**Յաւօք սրտի կ'ձանուցանենք թէ Միսաքեան հանգուցեալ Աւետիս Էֆ.ի արի լծակից Տիկին Տիրոհէի**

յետ երկարատեւ հիւանդութեան կիրակի երեկոյ առ Ատուած փոխեր է ի հասակի 48 տմայ, ի խոր սուգ համակրով իւր համայն գերգաստանները: Հանգուցելոյն յուղարկաւութիւնը պիտի կատարուի այսօր ԳՇ. մարտ 20. ժամը 5ին, Բերա Ասմալը-Մէսքիտ, Սօֆեալը փողոց թիւ 10, յիւր բընակարանն, ուրկէ Բերայի Սերրորդութեան եկեղեցին տարուելով, անտի ալ պիտի փոխադրուի ի Խոսողիչ Միսաքեան ասհմին դամբարանը:

Հետեւեալ խորագրով Արեւելեան Մամուլ, իւր փետր.ի ամսաթիւերին մէջ ուշադրութեան և ընթերցման արժանի լուր յօդուած մը կ'հրատարակէ, զոր մաս առ մաս հարկ կը համարեմք մեք ևս յառաջ բերել:

**ՀԱՅՈՑ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ Ա.**

Այս բառը ստեղծ կ'ընդգծեն ազգ. անհատներ ու թերթեր և անոր սահման մը տարու փորձեր կ'ընեն, Մինչև ցայսօր՝ այս փորձերն ապարդիւն և տրուած բացատրութիւններն անորոյ կ'թուին մեզնի եւ զարմանք չեն, քանի որ մեր քաղաքականութեան տարերքը բոստանի տնտեսի և իւրաքանչիւր հայկական շքանի արամադրութեան և դրից համեմատ՝ այլ և այլ գոյներ ու ձևեր կ'առնու: Առ հասարակ՝ որչափ հայ բնկերական ու քաղաքական վիճակ՝ նոյնչափ քաղաքականութիւն կայ: Հայ ժողովրդեան տկարութեան գլխաւոր մէկ պատճառն ալ այս զանազանութեան մէջ է, եթէ ընդհ. առմամբ՝ ազգի մը քաղաքականութիւնը կ'կայանայ իր հիմնական աշահուցն պաշտպանութեան ու ապահովութեան մէջ, իր յա-

ռաջադիմութեան ու արդարութեան գործադրութեան մէջ, այս նկատմամբ հայոց քաղաքականութիւնը պարզապէս անզգայութեան կամ անիշխանութեան քաղաքականութիւն է, կամ լաւ ևս ըսենք, քաղաքականութեան բացասութիւնն է: Եւ այն ժողովուրդը՝ որ ժամանակիս պիտոյից ու պահանջներուն համեմատ որոշ քաղաքականութենէ մը զուրկ է, այն ժողովուրդն որ իր ազգ. բնիկ շահուց վրայ հիմնեալ քաղաքականութիւն մը չունի, չկրնար ունենալ նաև որոշ նպատակ մը, ի չկարծուի որ միայն քաղաքական իշխանութիւն վայելող ազգերը կըրնան քաղաքականութիւն մ'առնենալ: Քաղաքականութեան տարերք կ'համարուին՝ ըստ մեզ՝ ժողովրդեան մը կրթութեան միջոցները, օրէնդրութեան պայմանները, ազգ. ու կրօնական հիմնարկութիւնները, իր ներքին վարչային կազմակերպութիւնը, իր բարոյական ու մտաւորական ուղղութիւնն, իր բնիկ երկրին գորգացման եղանակները:

**ՀՆՈՒՍԱԳՐԱՆՈՒՐՔ**

Գոհարէ 31 մարտ Խըտիվին նոր շինած դանձային ծրագիրը՝ Եգիպտոսի բոլոր պարտուց տոկոսներուն ամբողջապէս վճարուիլը խոստանալով, ներս մտնելիք ծրարախոսին վրայ դրուած մաքսատուրքը կ'նուազեցնէ: 1864ին կնքուած եգիպտ. փոխառութեան տոկոսեաց վճարումը մինչև մայիս 1 ետ ձեգուած է:

**Այս աստուգ հասած**

Բարիք 31. — Տէրութիւնք համաձայնեալ են եղեր Արեւելեան Բումէլին հետեւեալ կերպիւ գրաւելու: Օսմ. զօրքը հարաւակողմը (Էտրնէի կողմը) պիտի գրաւէ, Ռուսք հիւսիսակողմը (Պալքանեկը զիծք), Անգլիացիք, Աւստրիացիք ու իտալացիք ալ կեդրոնը: Դիւանագիտական ակումբը ներու մէջ խնդիր կ'ըլլայ նոր ֆոնֆէրանս մը դուստրել Ս.Բէթերուպուրկի մէջ:

**ԳՐԱՍՄԱԿԱՆ**

Այս աստուգ բացուեցաւ	13.07
Թղթադրամ	790.00
Բումէլի	46.25

**ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐՆԵՐ**

Թղթադրամի բարձման համար կայս. պալատան աւելորդ ոսկեղէն ու արծաթեղէն անօթներուն մէկ մասը՝ թնդանթմարանի կտուրերով, երէկ տրքու-

նի փողերանոցը փոխադրուեր են դրամ կոխուելու:

—Արեւելեան Բումէլի եւրոպական յանձնաժողովոյ օսմ. պատուիրակներն Ասիմ բաշա և Ապրո Ս. Էֆ. գործերին լրացուցած և մայրաքաղաքս դարձած ըլլալով, երէկ պալատը վեհ. Սուլթանին ներկայանալէն յետոյ, Բ. Դուռն ալ գալով մեծ Եպարդոսին հետ տեսակցեր են:

—Հալէպի և Տիգրանակերտի դաւաճներն ըստ Պերլինի գաղնագրին ՅԱՂԻ յօդուածոյն՝ հարկ եղած բարենորոգումներն ընելու պաշտօնով արտաքոյ կարգի յանձնաժողովոյ լիազօր Գոմիսէրք Մազհար բաշա և Նուրեան Էֆ. Բ. Դրնէն իրենց ստանալիք հրահանգներն առած ըլլալով, վաղուան գաղղ. շրգենաւով և Սկէնտէրուի ճանքով պիտի մեկնին, Հալէպի նորքնախոր կուսակալ Գալիպ բաշա ալ միատեղ:

—Արեւելեան Բումէլիի գաւառը եւրոպական խառն զօրք գրաւուելուն առթիւ, Բ. Դուռը Մեծ տէրութեանց մէկուն ծանուցագիր մը դրկեր է, յայտնելով թէ՛ յիշեալ գաւառին բարեկարգութիւնը պահպանելու համար՝ ներս մտնելիք եւրոպական զօրաց 10.000 թիւը բաւակուն չէ, և թէ յիշեալ եւրոպական զօրագնդին ներս մտնելուն ալ այն սլայմանու թող պիտի տրուի՝ որ տասնց հետ օսմ. զօրք ալ միատեղ գանուի, քանի որ ռուսական զօրքերն ալ պիտի մասնակցին այդ զբաւումը:

Սոյն ծանուցագրին պատասխան մը չէ տրուած:

—Պուլկարիոյ Ազգ. ժողովոյ անդամոցը իւրաքանչիւրն, Միւլթիմին Եպիսկոպոսն ու Խախամադու խն ալ միատեղ ըլլալով, օրք 10ական Ֆրանքի թոշակ մը պիտի ստանան եզեր:

—Ռուսաստանի Նիհիլիսթներու յեղափոխական մարմնոյն հետ զաւակցութիւն ունենալու յանցանք նշանաւոր կոմսուհի մը ձերբակալուեր է Ս. Բէթերուպուրկի մէջ:

—Պերմանիոյ կառավարութիւնը, Անգլիացոց Եւրոպական մանք զէժ դնելու համար, սահմանադրոյն վրայ ամբու թիւն ներ շինելու սկսեր է:

—Պաշտօնէից ժողովն այս կիր. օրուան նիստին մէջ, Արեւելեան Բումէլին եւրոպ. խառն զօրք գրաւելու խնդիրը նկատողութեան առնելով, որոշեր է սա պայմաններն առաջարկել թէ՛ խառն գրաւման սլայմանաժամը 1 տարի տեէ, և Պալքանեկը սահմանադրին ալ օսմ. զօրաց պահպանութեանը յանձնուին:

—Բիւսթէմ. բաշա, որ Արեւելեան Բումէլիի կառավարիչ պիտի ընտրուի, ուզեր է որ օսմ. զօրաց ընկերակցութեամբը մտնէ յիշեալ գաւառը, իսկ ասի թող չէ տրուեր, առարկուելով թէ՛ ըստ Պերլինի դաշնագրին, օսմ. զօրքերը մինակ ապստամբութիւն մը ելած ատեն կարենալով մտնել Արեւելեան Բումէլիի մէջ, դորա խաղաղ գտնըւած ատենը՝ օսմ. զօրք ներս չպիտի կարենայ մտնել:

—Տէրուոյ Պարսից դեսպանատունը հասնող պաշտօնական հեռագիր մը, կ'ստէ անցեալ օրուան Բէթերուպուրկի այն հեռագիրը թէ՛ Թէհրանի մօտերը ահագին երկրաշարժ մ'եղնելով 1100 հոգի փրատակաց տակ թաղուեր են: Մինակ Գալիպէի մէջ փոքր երկրաշարժ մ'ըլլալով, բնաւ սնձի կորուստ չէ պատահեր:

—Ամիրալ Հօպարթ բաշա շք. օր վեհ. Սուլթանին ներկայութեանն ընդունուելով Ա. կարգի Օսմանիէի պապունշանն ստացեր է:

—Բ. Դրնէն երէկ պաշտօնապէս հաղորդուեր է Հասուն գերագալտառին թէ հայ-կաթոլիկաց Պատրիարք եղած է:

—Էտրնէի գաւառին նորակազմ գաւառական մարմնոյն անգամայ մէկ մասը երէկ երկաթուղիով էտրնէ մեկնեցան:

—Էկզամները անգղ. թերթը կըսէ որ եթէ Անգլիոյ եւ Աֆղանիստանի մէջ հաշտութիւնը կնքուի, Ռուսիա խիվոյի երկրին մնացած մասն ալ պիտի գրաւէ, և եթէ Անգլիացիք Պալիս մէջ զօրք զձեւու ըլլան, Ասիոյ մէջ ռուսական և անգղիական երկիրներն գրեթէ իւրաքու սահմանակից եղած կ'ըլլան:

—Արեւելեան-Բումէլի խառն յանձնաժողովը յառաջիկայ շք. օր Ղալթա-Սէրայի շէնքին մէջ գումարուելով նիստ պիտի ընեն եզեր:

—Հօլանտայէն գաղղ. լրագրաց զրկուած թղթակցութիւններն կ'յայտնեն թէ՛ Պիզմար իշխանը Հօլանտայի թագաւորութեան երկիրն ալ գերմանական կայսրութեան մէջ առնել կ'խորհի եզեր:

Այս հրատարակութիւններն Պերլինի քաղաքագիտաց ակումբներուն մէջ մեծ շփոթութիւն և աղաւորութիւն յառաջ բերեր է:

—Սթամպուլ կըսէ թէ Ֆուսատանի սահմանադրոց յանձնաժողովոյ հելլէն անդամներն, ուրիշ հիմնագծի մը վրայ բանակցութիւններն շարունակելու համար նորէն Բրէվէզա դառնալու վրայ ըլլալով, Բ. Դուռն ալ հեռագրեր է իւր պատուիրակաց, որ առ այժմ Բրէվէզայէն չմեկնելով հօն կ'ենան:



— Շուէտի և Նորվեգիոյ թա-  
գաւորին պահաճառանք որ-  
դին կիւսթալ իշխանը յառա-  
ջիկայ եչ. օր մարաքաղաքս պի-  
տի հասնի :

— Պիւճէի յանձնաժողովն  
իւր աշխատութիւնն աւարտե-  
լով, իւր գանձային ծրագիրը  
վերջ. Սուլթանին մատուցել է,  
որոյ մէջ տէրութեան բոլոր հա-  
սովքը 13 միլիոն, բոլոր ծախքը  
18 միլիոն և բոլոր երեքուն  
պարտուց գումարը 14 միլիոնի  
կհասնի : Յայտնի չէ թէ 3 տա-  
րիէ ի վեր անվճար մնացած  
կտրոններն ալ այդ երեքուն  
պարտուց մէջն են մի :

ԱՁԳ

Դպրոցասիրաց Արիւնդեան  
ընկերութիւնը Տարօնոյ դաւա-  
ռին համար դասատուաց պէտք  
ունենալով, կ'ընդունի որ Տա-  
րօն երթալու փափաքող գասա-  
տուք բարեհաճին զիմել Տնօ-  
րէն խորհրդոյ սենեակը ի Սառ-  
նըճի խան Ղալաթիա. եչ. և  
չր. երկու ժամը 10, Տրուե-  
լիք ամսականը զօհացուցիչ :

ԱՁԳ

ՀՐԱԳՐՈՅՑ Բաժանորդագի-  
նքն, ըստ վերջին տնօրինու-  
թեանց, թղթագրամէն սկիւ-  
քբաժի վերածելու հարկադրե-  
ուած լինելով, մեր բաժանոր-  
դաց դեռ ևս բանելիք պայմա-  
նաժամուն մէջ ալ նոյն հաշույն  
համեմատ եղած կիսովին զեղ-  
չումը հետեւեալ կերպիւ կար-  
գադրուած է :

Ապրիլին լրանալիք բա-  
ժանորդութեան պայմանաժամը  
պիտի լրանայ մարտ 15ին  
Մայսին պայմանաժամը կ'ընդ  
Ապրիլին » » 15ին.  
Յուլին » » մայսին.  
Օգոստին » » 15ին.  
Սեպտին » » յուլին.  
Հոկտին » » 15ին.  
Նոյեմբին » » յուլին.  
Դեկտին » » 15ին.  
80 յնվ. ին » » 79 օգոստին.  
80 փետ. ին » » 15ին.  
80 մարտին » » սեպտ. ին

ՇԱՊԳ

ՄՈՒՀԱՐԷՊԵՍԻ ՀԻՔԱՍԵՍԻ

Հեղինակութիւն  
ՊԱՐԳՈՆ ՊԵՏԻ  
Սոյն ընտիր պատմութիւնը դըր  
թերթ առ թերթ կը հրատարակուի  
կը ծախուի հետեւեալ տեղերը :  
Կ. Պօլիս Էմին Էօնիւ Սուճի Պօ-  
զոս աղային խանութը, Բերա Մեծ  
փողոց ծխախմբաւոց խանութները  
Թարա-պաշի ծխախմբաւ Սնտրիաս  
աղայի խանութը :  
Մէկ թերթին գինն է 30 փարա  
մէճիտ. իսկ մէկ Հատորի բաժանոր-  
դագրութեան համար կանխիկ կը  
վճարուի մէկ արծաթ մէճիտ միայն :  
Բաժանորդագրութեան տեղին է  
Կ. Պօլիս Սուլթան-համամ Նշան Էֆ-  
ֆէրայեանի 4 թիւ փողոցատունը,  
Բերա Թարա-պաշի Համակամ զբօ-  
սարանը Միհրան Ս. Քիթապճեան և  
Էտրիքէ Ս. Բաճիանէ չարչար Հանի  
կարապետ Ասատուրեանի խանութը :  
Հրատարակող  
Միհրան Ս. Քիթապճեան

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ  
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ  
Թարգմանեալ ի Գաղղիականէն

Կեդրոնատեղին է Ֆերէկեան  
դրատունը. գին թերթին 1 շաբ-  
թաթ :

ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ  
ՀԱՄԱՌՈՍ

ԱՁԳՈՅԻՆ ԴՊՐՈՅԱՑՔԻ ԿԱՄԱՐ  
Գրեց Հ. Գրիգոր Վ. Գովրիկեան  
Միթ. Ուրտէն  
Վիէննա Միթ. Տպարան 1879

Բովանդակութիւն.— Միջին ու  
Նոր Պատմութիւնը՝ մինչև մեր օրե-  
րը հասցնող, համարուած բայց կա-  
տարեալ զեպքերն, մասնաւորապէս  
արգ. դպրոցաց գործածութեանը հա-  
մար շնորհած է.— Շատ հմուտ գը-  
րութիւն է, ուր յայտնապէս կերևի  
գերմանական ճաշակ ու խորունկ  
հմտութիւն.— Ասոր արժէքն այնչափ  
աւելի մեծ է, որչափ առաջիններէն  
մէկն է ազգի մէջ, իբրև գտա-  
գիրքը վասն զի թէև կայ հատ մը  
սակէ 50 տարի առաջ հրատարակ-  
ուած, բայց բայց անկէ, որ զորի է  
բոլորովին հաստատուն գրութիւնէ,  
չատ ընդարձակ բաժնուած է և Պատ-  
մութեան հոգին ու ծուծը թող տա-  
լով, աւելի զուարճալիաց ու զրոյց,  
նորու միտ դրած է, որ պատմու-  
թեան չէ՛ թէ էական, այլ երկրորդ-  
գական, ման աւանդ թէ երրորդական  
մասը կ'կարգուանեն : Արիչ այլևայլ  
տեղեր ու այլ և այլ ժամանակ հրա-  
տարակուած պատմութեանները ամ-  
բողջ չեն, մասնական ենևսուտի իր-  
բև գործածութեան մէջ մտնելի  
դրքեր, հասարակութեան ձեռքը  
դեռ չեն կրնար արուել.— Աւր թո-  
ղունք որ մատենագիրը, շատ մտա-  
գիր Տայեցուած մ'ըրած է նաև  
ազգ. պատմութեան, զոր մինչև մեր  
օրերը հասած է՝ թուականներու  
ճշգրտեմամբ կ'գտնենք ասոր մէջ  
նաև ազգ. մատենագրութեան վրայ  
բաւական տեղեկութիւններ :

ՏՕՒԹԵՐ ՄԿՐՏԻՉ ԱԼԼԱՆԵԱՆ

Երկար տարիներէ ի վեր  
կործ քի, սրտի և թոքախտի  
հիւանդութիւնները իրեն մաս-  
նեծիւ ընտրած և մեծ փոր-  
ձառութիւն ստացած բլլալով  
յաջողած է սոցա բժշկութիւնը  
կատարելագործել, հիմնովին  
բուժելով նոյնիսկ երկրորդ կար-  
գի խստագոյն աստիճանները :

Այս աշխիւ պատիւ ունի  
ժանուցանել Արգոյ հասարա-  
կութեան որ պատրաստ է մաս-  
նաւոր այցելութիւններ ընել  
հիւանդաց և ամեն օր բնօր-  
նի իրեն դիմող հիւանդները  
մինչև կէս օր՝ իւր բնակարանը,  
ի Գաար գիւղ Մէօհիւրտար-  
ձատէսի թիւ 45, ալ ԴՇ. օ-  
րերն ալ ձրի պիտի նայի :

ՇՇ. օրերը պիտի գտնուի  
Մ. Բէյմուտի ի քի-գարուլը  
դիպարանը Կ. Պօլիս Սուլթան-  
Համամ փողոց :

ՀԱՄԱՌՈՍ ԴԻՅԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Յօշկեաց Գրեկոյ Մտերեան  
82 էրեսէ բողկոցեալ և իւր  
տպարանէն ի լոյս ընծայուած է.  
Կրնայ դպրոցաց մէջ իւր գասագիրք  
ծառայել, գինն է 50 սանդիմ :

Ղալաթիա ԲՇ. 19 Մարտ  
ԸՆԴՀ. ՊԱՐՏ. ԱՐԺ.

Բաց	13.01
Դոց	13 01
Բարձր գին	13.04
Ցած գին	12 39
Թղթագրամ Բաց	720 00
բարձր	770.00
ցած	710 00
ժամը 11	770 00
Փոխ. 63ի	Փր. 070.00
» 65ի	» 073 00
» 69ի	» 070 00
» 73ի	» 066.00

Գանձատուն	22.00
Սուրէթէ Ժէնէրալ	4 15
Սուրէթէ Օթօման	3 90
Պանք տը Բօնսթ.	6.10
Քրէտի Ժէնէրալ	5 00
Թրամիլէյ	2 60
Բուս. կրկանութիւն	45.75

ԸՆԴՈՒՆԱԳՐ ԴՐՈՅՄԱՅ

(Ս. Կ. 100 ԿԸ. 1 հաւաք)	
Անդր. սակի	109.29
Գաղղ.	87.19
Բօլ	89.30
Քարպօն արծաթ	16.20
» թղթագրամ	09 00
Քըլմեց	51.12
Հինգ անց	15.10
Մէթալիք	15 20
ձերմակ մէճիտ	06 00
Պղինձ	163.00

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ՏԵՏԵԱՆ

ԺՕՂԵՑ ՊԱԼԱՍՄՕ

ԹԱՐԳՄԱՆԵՑ  
ԿԱՐԱՊԵՏ ԷՍ. ԵԱԶՄԱՃԵԱՆ  
Առէյաւոր Տիւմա գաղղիացի  
մեծանուն փառասնիկ գրչէն ելած  
սոյն գործին Տրք այն է վերջին հա-  
տորն ալ Իգմբի Տէտեան եղբարց  
տպարանէն ի լոյս ընծայուելով Պօլիս  
հասած է : Այս գեղեցիկ վէպին մէջ  
ուր Լուի Ժե. Ի կեանքը վարքն ու  
վախճանը նկարագրուած են, հետ  
զհետէ կ'ընդհանրանալ Վօլթէա և  
Ռուսօ՝ անցեալ դարուն այն երկու  
մեծ մարդիկը, թագուն գրտութիւն-  
ներ կ'այայտենին, Մասօնաց օթեակ-  
ները օտարին առջև կ'արայունեն : Ա-  
մեն կարգի և հասակի մարդ լը  
սրած նիւթը հոն կ'գտնէ կ'ըն  
Կը ծախուի Եֆէի ճամբ Զիլին.  
կիրէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղուկա-  
սեան գրատունը և ուրիշ գրովա-  
ճառաց քով :  
Գին 2 Ֆրանք 25 սաթ.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ԳԻՏԵԼԻԲ ՈՒ ՊԱՐՏԻԲ ՏՂՈՅ

Բովանդակին Մամուրեան էֆի  
աշխատասիրութեամբ Իգմբի Տէտե-  
ան եղբարց տպարանէն ի լոյս ըն-  
ծայեալ 248 էրեսէ բողկոցած պատ-  
ուական գիրք մնէ, որ կրնայ հեղի-  
նակին սակէ առաջ հրատարակուած  
«Նոր ընթերցարան»ին լրացուցիչ մա-  
սը համարուիլ և Մայ կայի Բ. Գասի  
աշակերտաց ծառայելու Սոյն գործը  
բաց ի ամենակարեւոր գիտելիքներէ  
կ'պարունակէ նաև սցնպիսի նիւթեր  
որք սպգ. մանկուցն սրտին մէջ ի  
մատաղ հասակէ հայրենասիրական  
զգացումներ կը ներշնչեն :  
Կը ծախուի Եֆէի ճամբ Զիլին.  
կիրէր ճատտէսի, թիւ 2, Ս. Ղու-  
կասեան գրատունը, գին 1 1/2 ֆր :

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ  
ՅՕՐԻՆԵՑ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Կը ծախուի Եֆէի ճամբ Զիլին.  
կիրէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղուկա-  
սեան գրատունը և ուրիշ գրովաճա-  
ռաց քով :  
Գին 1 Ֆրանք

ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՄԱՂԱՋԱՆ

ԳՏՆՈՒԱՄ  
ՈՒ  
ՓԱՆԱՍԷ

Կրնուած ցաւի դեղը բոլորովին  
բուժելու համար բաղադրուած ըլլալով  
թէ՛ ներքէն և թէ՛ դուրսէն կը գոր-  
ծած ուի ու բաղաժախ ցաւեր ու հի-  
ւանդութիւններ շուտով կը բժշկէ :  
Ինչպէս որ վարը յիշուած է :  
Ամեն տեսակ Գոլի, Բատմաք-  
սի, մէլքի կամ լիզիքներու ցաւեր,  
ու նաև Թանջը, Գօլթրա և այլ ա-  
մառուան հիւանդութիւններ ունե-  
ցողները այս գեղէն խմելու են հե-  
տեւեալ կերպով : Կէս գաւաթ Չուրի  
մէջ, կ'ըր սպարի մը զրգալէն աւելի  
չաքար. վրան լիցուր անուշի զրգալ  
մը փանասէ աղէկ մը խառնէ ու  
խմէ :  
Կոկորդի հիւանդութեանց, և  
Ուուեյքի համար գեղը վերայիցեալ  
կերպով պատրաստէ ու ժամը կամ  
երկու ժամը հեղ մը՝ մէկ կամ  
երկու անուշի զրգալ այն բաղադ-  
րութեան խմէ : Յօղացաւի, Բիւմա-  
թիլի, Ուքի ցաւի, Ստամոքսի ու  
տեսակ տեսակ հիւանդի ցաւերու հա-  
մար դուրսէն փանասէ քաւելով աղէկ  
մը շփելու է : Այլուայի ցաւի համար  
քիչ մը բաղաժախ փանասէի մէջ  
թաթիլելով ցաւած սկուային վրայ  
գնելու է :

ՄԱՆԵՆ ԵՐՐՈՐ ԳԱԷՐ ՀԱ-  
ՄԱՐ ԳՐԱՐԱՆ ԳՈՒՄԱՍԷ ԶԵԼ  
ԿԸՐԸ, ԵԹԷ ՔԻՉ ՄԸ ԱՂ ԽՄԱԿԻ ԱԵՆ-  
Ի շուտ բժշկութիւն կը ըլլայ :

Մարմնոյ սպրուած կամ ճմլու-  
ած տեղերը բժշկելու համար վրան-  
գը պատուհանին պէս փանասէն  
վրան աղէկ մը լիցնելու է : Դառնա-  
կով ևլն. կտրուած վերքերը բժշկե-  
լու համար՝ արեւը չարած շուտով  
մը վերքը կապելու և յապին վրայէն  
փանասէ լիցնելու է մինչև որ լաւ մը  
թրլի փանասէն նաև արեւն չըլա-  
նը կարողացնէ ու բոլոր բնութիւնը  
կը զորացնէ :

Այս գեղին օգտակարութեանը  
վրայ երկարօ էն գրել աւելորդ կը  
համարեմք, զործածողները զայն  
միշտ կը գովին, ուզողը կրնայ ան-  
ձամբ փորձել. գինն աժան է : Կը  
ծախուի Միմասեան և Ընկերաց Ա-  
մերիկեան փանաստունը որ ի Ղա-  
լաթիա Կ. Պօլսոյ

ԲԱՆԱԼԻ  
ՀԱՅԵՐԿԵՆ ԵԱՐԱԳՐԱՆԻՐԵԱՆ  
ԳՐԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Ահաւասիկ գեղեցիկ մեթոտ մը  
Մամուրեան էֆի աշխատասիրու-  
թեամբ մուտ գտնելով մայրենի լեզ-  
ուի ուսման մէջ, կ'աւաջնորդէ ա-  
շակերտները շարագիր լինելու, չըս-  
պատելով որ անոնք քերականութեան  
տաղտկալի շրջանէն անցնին :

Այս գրքոյը Զմիւռնիոյ Տէտե-  
անեղբարց տպարանէն ի լոյս ըն-  
ծայուելով կը ծախուի Եֆէի-ճամբ  
Զիլին կիրէր ճատտէսի թիւ 2, Ս.  
Ղուկասեան գրատունը և ուրիշ գը  
բովաճառաց քով : Գին 50 սանթիմ

Ի ՏՊԱՐԱՆԻ  
ՆԻԿ.Մ. ԹԻՒԼՊԷՆՃԵԱՆ